ԱՆՄԱՆՕԹ ԱՂՋԿԱՆ

Ես քեզ տեսայ, եկար թափուն
Եւ կանգ առար վանքի բակում,
Ջերմ, երկիւղած խաչ հանեցիր,
Ու լուռ աղօթք մրմնջացիր:

Սիրտըս կարծես մի պահ կանգնեց,
Ես ցանկացայ քեզ հարցընել,
Թէ ի՞նչ էիր դու աղերսում
Հեզամրմունջ քո աղօթքում:

Թախի՞ծն էր քեզ բերել այստեղ,
Թէ՞ հրեուանքը հոգուդ թռչող,
Այս սուրբ վայրը աղօթատան՝
Աստուծոյ հետ հաղորդութեան:

- Տէ՛ր իմ Աստուած, լսի՛ր նրան.
Ջահել սիրտը այս աղջկայ
Թող չլցուի անյուսութեամբ,
Թող միշտ յորդի ուրախութեամբ:

Ես քե՛զ տեսայ, ո՛վ Տիրամայր,
Պատկերի մէջ այն աղջկայ,
Սիրտըս ճչաց երանութեամբ,
Մեր հաւատի յաւերժութեամբ:

ՆԵՐՍԷՍ ՎԱՆԱԿԱՆ

digitised by A.R.A.R.@